# ՆՐԱ ԱՆՈՒՆԸ ՄԻՇՏ ՊԱՅԾԱՌ ԿՄՆԱ, ԳՐՎԱԾՔՆԵՐԸ՝ ԹԱՐՄ ՈՒ ՍԻՐԵԼԻ

## ԼՐԱՆՈՒՄ Է ՀԱՅ ՄԵԾ ԵՐԳԻԾԱԲԱՆ ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 170-ԱՄՅԱԿԸ



Հայ մեծ գրող-երգիծաբան, լրագրող, հրապարակախոս Հակոբ Հովհաննեսի Պարոնյանի անունը պայծառ է, ինչպես էր իր ապրած օրերին: Նրա հիշատակը վառ է, գրվածքները՝ թարմ, քանի որ ստեղծված են հանճարեղ մտքով ու բեղուն գրչով, ստեղծված են բոլոր ժամանակների համար ու միշտ էլ կլինեն հրատապ ու կենսական:

Ծնվել է այդ հանճարեղ մարդը 1843 թվականի նոյեմբերի 19-ին, Ադրիանուպոլսում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Արշակունյաց վարժարանում: 1857 թվականին ընդունվել է հունական դպրոց, մեկ տարի անց հեռացել է և այլևս չի շարունակել ուսումը:

1863 թվականին տեղափոխվել է Կոստանդնուպոլիս, աշխատել է հեռագրատանը, զբաղվել գրական-լրագրական գործունեությամբ: 1871-1872 թվականներին դասավանդել է Մեսրոպյան վարժարանում: 1873-ին պատրիարքարանի պաշտոնյա էր, ապա մեկ տարի ուսուցիչ Սկյուտարի ճեմարանում: Նյութական պայմաններից դրդված 1877 թվականին մեկնել է Զմյուռնիա, իսկ 1879 թվականի հունիսից ընդմիշտ հաստատվել Կոստանդնուպոլսում: 1880 թվականին ընտրվել է "Միացյալ ընկերություն հայոց"-ի, 1888 թվականին՝ տոմարակալության ուսուցիչ Կեդրոնական վարժարանում:

Հակոբ Պարոնյանը գրական ասպարեզ է իջել որպես թատերագիր՝ 1865 թվականին գրած "Երկու տերով ծառա մը" և "Ատամնաբույժն արևելյան" կատակերգություններով:

Իր ժողովրդականությամբ և հայրենասիրությամբ Պարոնյանն առանձնապես փայլում էր մեր իրականության մեջ 1870-ական թվականների վերջերից, երբ հրապարակ եկավ հայկական հարցը: Այդ թվականներից նրա երգիծանքի հիմնական թեմաներն են դառնում ժամանակի հուզող քաղաքական հարցերը: Պարոնյանն ամբողջ հոգով տենչում էր տեսնել հայ ժողովրդին ազատագրված սուլթանական Թուրքիայի բարբարոսական լծից: Այդ շրջանում նրա մեծագույն ծառայությունը մեր ժողովրդի հանդեպ պետք է համարել այն, որ նրա երգիծանքը ընթերցողին ներկայացնում էր իրերի և իրադարձությունների միանգամայն ռեալ պատկերը, բացահայտում դրանց իսկական էությունը՝ ամեն կերպ ձգտելով սթափեցնել մտքերը, որպեսզի ժողովրդի ազատագրման վերաբերյալ հույսերը չկապվեն ոչ "ազգային ջոջերի" գործունեության, և ոչ էլ եվրոպական երկրների կեղծ խոստումների հետ:

Հակոբ Պարոնյանի երգիծական տաղանդը կարգացել է լրագրական ասպարեզում: Նախապես աշխատակցել է "Փող առավոտյան" և "Եփրատ" պարբերականներին, որի խմբագիրը 1871-ից եղել է ինքը: 1872 թվականից սկսվել է Պարոնյանի լրագրական գործունեության առաջին շրջանը, երբ Հարություն Սվաճյանը իր հանդեսի երբեմնի աշխատակից և օգնական խմբագիր Հակոբ Պարոնյանին հանձնել է "Մեղուի" խմբագրությունը: Այստեղ Հակոբ Պարոնյանը հանդես է եկել գերազանցապես ազգային-հասարակական կյանքին, ընտանեկան կենցաղին ու բարքերին, լրագրությանը, թատրոնին վերաբերող հրապարակախոսական հոդվածներով:

1874 թվականին սկսվել է Պարոնյանի լրագրական գործունեության երկրորդ շրջանը (1874-1877), երբ "Մեղուն" հրատարակվել է "Թատրոն" անունով: Ամսագրում լույս են տեսել "Թղթակցությունք թատրոնի", "Գուշակությունք թատրոնի", "Բառարան թատրոնի", "Ազգային օրագրությունը", "Կամիթներ" գործերը, որոնք քաղաքական երգիծանքի բարձրարվեստ նմուշներ են:

1874-ից "Թատրոնում" սկսվեց տպագրվել "Ազգային ջոջեր"-ը: "Ջոջերը" Պարոնյանի ժամանակակիցներն են, կենդանի մարդիկ, 19-րդ դարի հայ հասարակական կյանքի և մտքի ներկայացուցիչներ, որոնց գրական-երգիծական դիմանկարները ստեղծված են կենսագրական փաստերի տվյալներով, հաճախ՝ խտացած, չափազանցված գույներով, բայց առանց չարաբանության ու նենգափոխության:

Քաղաքական հետապնդումների և նյութական դժվարությունների հետևանքով "Թատրոնը" փակվել է, սակայն 1878 թվականից Պարոնյանը կուզահեռաբար հրատարակել է հայերեն մանկական առաջին "Թատրոն բարեկամ մարդկանց" պատկերազարդ հանդեսը: Մեծ երգիծաբանը աշխատակցել է նաև "Հույս", "Փորձ", "Արձագանք", ինչպես նաև "Փարոս Հայաստանի" պարբերականներին: 1878 թվականին "Մասիսում" տպագրվել է "Կամիթների" շարունակությունը: 1880-ին պրակ առ պրակ լույս է տեսել "Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ", իսկ 1883-ին "Ծիծաղը":

1880-ական թվականներին "Փորձում" լույս է տեսել "Հոսհոսի ձեռատետրը", որի քաղաքական երգիծանքն ուղղված է ազգային վերադաս մարմինների, թուրքական կառավարության և եվրոպական դիվանագիտության դեմ: "Հոսհոսի ձեռատետրը" իր ամբողջությամբ քաղաքական երգիծանքի նոր խոսք է՝ առողջ, սրամիտ, ճկուն:

Հակոբ Պարոնյանի ստեղծագործական գործունեության երրորդ շրջանը կապված է "Խիկարի" հրատարակության հետ: Համիդյան բռնություն-ների դաժան տարիներին այլևս անկարելի էր թուրքական բռնակալությունը մերկացնող ֆելիետոնների և քաղաքական հոդվածների հրատարակումը, և Պարոնյանը զբաղվել է ազգային կյանքի, ընտանեկան բարքերի հուզող հարցերով: 1886-1887 թվականներին "Խիկարում" լույս են տեսել "Պաղտասար աղբար", "Քաղաքավարության վնասները" և "Խոսակցություն մեռելոց" երկերը: "Քաղաքավարության վնասները" մարդկային տարբեր կերպարների ու փոխհարաբերությունների հավաքածու է. հերոսները փողամոլության, խաբեության կոհեր են՝ զրկված անհատականու-թյունից ու կամքից, բռնադատված քաղաքավա-րության կեղծ օրենքներով:

Հայ դասական թատերգության գոհարներից է "Պաղտասար աղբար"-ը, որի առանցքային հարցը ընտանիքի բարոյականությունն է, բովանդակությունը՝ անհավատարիմ կնոջ և խաբված ամուսնու բախումը: Սրամիտ են կոնֆլիկտների լուծումները, ուժեղ է դրության և, մանավանդ, խոսքի կոմիզմը: "Պաղտասար աղբար"-ը շոշափած հարցերի կենսունակությամբ, թատերական արվեստով արժանացել է բարձր գնահատականի և ճանաչման:

1880 թվականին պրակ առ պրակ լույս տեսավ Հակոբ Պարոնյանի ամենամեծ երկը՝ "Մեծապատիվ մուրացկաններ"-ը, առանձին գրքով՝ 1887-ին: Գլխավոր հերոսը ամուսնանալու նպատակով Տրապիզոնից Պոլիս եկող Աբիսողոմ աղան է, որի շուրջը ծավալվում են դեպքերն ու գործողությունները: Հերոսները կյանքի, հասարակական պայմանների բերումով մուրացկաններ դարձած հայ մտավորականության ներկայացուցիչներ են: Հեղինակը ծաղրում է "մուրացկաններին", բայց մեղադրանքը նրանց ծնող կարգերի դեմ է:

Հակոբ Պարոնյան-ստեղծագործողի գլխավոր հատկանիշը նրա ռեալիստական արվեստի դեմոկրատիզմն է, կյանքի լայն ճանաչողությունը, ընդհանրացման ուժը, որով պայմանավորված է նրա երգիծանքի հավերժությունը: Պարոնյանը ունի նաև արվեստի (թատրոն, երաժշտություն) և գրականության հարցերին նվիրված բազմաթիվ քննադատական հոդվածներ:

Հակոբ Պարոնյանը Դոնի հայության կողմից ամենասիրված գրողներից մեկն է: Նրա ստեղծագործությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում շատերի մոտ: Իսկ թե ինչպիսի հափշտակությամբ են տեղացի թատերասերները դիտում Հակոբ Պարոնյանի պիեսների բեմադրությունները, անկարելի է նկարագրել:

Հակոբ Պարոնյանը մահացել է 1891 թվականին, Կոստանդնուպոլսում՝ թողնելով անմահ գրական ժառանգություն և ընդմիշտ անթառամ հիշատակ:

---

**ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թվականի 1-ին կիսամյակի համար:**

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում:**